











# Ս. ՍԱՐԳՍԻ ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

2009-01-23

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### *ՄԵԾ ՏՈՆԱԽՄԲՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԵՐ*

Սիրո արագահաս բարեխոս Ս. Սարգսի տոնն այս տարի նշվում է փետրվարի 7-ին:
Այդ առթիվ Ս. Սարգսի անունը կրող եկեղեցիներում կմատուցվի Ս. Պատարագ և կկատարվի Երիտասարդների օրհնության կարգ:
Արարատյան Հայրապետական թեմը և Պողոսյան պարտեզները սիրով հրավիրում են բոլորին մասնակցելու աննախադեպ տոնախմբության: Ազգային ավանդական խաղեր բոլոր ներկաների մասնակցությամբ, համերգային ծրագիր, ձիավոր նվերներով, հյուրասիրություն, և այլ անակնկալներ փետրվարի 7-ին՝ ժ. 15.00-ից Սիրահարների զբոսայգում: Մուտքն ազատ է:
Ս. Սարգսի տոնախմբությունն իրականանում է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի բարձր հովանավորությամբ:

### *ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ-ՄՐՑՈՒՅԹ*

Արարատյան Հայրապետական թեմը և Նկարիչների միության հոգաբարձուների խորհուրդը սիրով հրավիրում են երիտասարդ ստեղծագործողներին (մինչև 35 տ.) մասնակցելու Սիրո արագահաս բարեխոս Ս. Սարգսի տոնին նվիրված ցուցահանդես-մրցույթին: Ցուցահանդեսի թեմաներն են.
- սեր Աստծո հանդեպ
- սեր Հայրենիքի հանդեպ
- սեր մերձավորի հանդեպ
- սեր ծնողների հանդեպ
- փոխադարձ սեր

Աշխատանքներն ընդունվում են հետևյալ անվանակարգերում.
- գեղանկարչություն
- գրաֆիկա
- քանդակ
- դեկորատիվ արվեստ

Աշխատանքներն ընդունվում են Նկարիչների միության տանը հունվարի 13-ից փետրվարի 3-ը: Մանրամասների համար կարող եք զանգահարել 56 48 53, 56 47 24 կամ 077 89 07 94 հեռախոսահամարներին:
Ցուցահանդեսի բացումը տեղի կունենա փետրվարի 7-ին՝ ժ. 13.00-ին Նկարիչների միության տանը:

### *ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԲԱԿԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Արարատյան Հայրապետական թեմը սիրով հրավիրում է բոլորին մասնակցելու սիրո արագահաս բարեխոս Ս. Սարգսի տոնին նվիրված բազմաթիվ տոնախմբություններին, մրցույթներին, հեռուստա և ռադիովիկտորինաներին: Եկեղեցիների բակերում կկազմակերպվեն տոնական միջոցառումներ ազգային խաղերի, երգչախմբերի, պարախմբերի, Ս. Սարգսին խորհրդանշող ձիավորի մասնակցությամբ:
Միջոցառումների ժամանակացույցը հետևյալն է.

5.02.2009/ հինգշաբթի

ժ.12.00-13.00՝ Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցու բակում
ժ.14.00-15.00՝ Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցու բակում

6.02.2009/ ուրբաթ

ժ.12.00-13.00՝ Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցու բակում

Ժ.14.00-15.00՝ Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու բակում

7.02.2009/ շաբաթ

Ժ.13.00-ին Ցուցահանդես-մրցույթի մեկնարկ Նկարիչների միությունում՝
Սիրահարների զբոսայգում մեծ տոնախմբում՝
Ժ. 15.00-ին փահլեվան, երգ ու պար
Ժ. 16.00-ին էստրադային, ազգային ծրագիր
Ժ. 17.00-ին թատերականացված խաղեր
Ժ. 18.00-ին դիսկոտեկ
Միջոցառումների ընթացքում ներկաներին սպասվում է հյուրասիրություն և ձիավորի կողմից բաժանվող նվերներ և բացիկներ:
Սիրո բարեխոս Ս. Սարգսի տոնին նվիրված բոլոր միջոցառումների մուտքն ազատ է:

Vicar's Office, 15 R. Israelyan St., St. Sargis Vicarial Church, 375015 Yerevan, Armenia.
Հեռ.: +374.1.587368, 587505, 584722. Ֆաքս: +374.1.545798. Email : araratd@arminco.com
Site design & development by AZD